

Ա Յ Ս Օ Ր

Կ'ուզէի որ այսօր բացուէր ինձ համար
Նոր կիրակի, տենչանքներու առաւօտ.
Հոգիս մեծնար, հորիզոնի չափ մեծնար
Ու չըզգայի նոր գալիքի մը կարօտ:

Ամենուրեք տեսնէի վարդ և շուշան
Ծովերն հանգարտ, մարդիկ առանց վշտերու,
Աշխարհս ըլլար խոշոր սրտի մը նըման
Տարածէի թեւերըս դայն գրկելու:

Ու խօսէի ամէնուն հետ իր լեզուն,
Բանալու նոր հոգիներու երկինքներ,
Որքան գաղտնիք պիտ' յայտնէր սիրտը մարդուն
Ձոր կը պահէն շիրմին համար մեռելներն:
Այն, վերջին մարդն այս կիրակին գէթ վայլէ
Որ աշխարհիս դուռն իր ձեռքով պիտ' օխէ:

Քեմիա 9 Մայիս 1945

ՍԱՀՈՒԱՆ ՀԵՏ

Այսօր ըլլանք եղբայր ու քոյր
Գրկենք զիրար տարտամօրէն
Բանանք գաղտնի դամբանի դուռն
Յաւերժութեան դռնանք նորէն

Սիրենք աղօթք, մոմ ու բուրվառ
Լանք ծնրադիր խաչի մը տակ,
Երբ մեր վերան իջնէ խաւար
Յոյսը վառեն մեզի ճըրագ:

Քեզ կը սիրեմ կեանքիս օրերն
Աւելի քաղցր երազելու.
Պատրաստ ըլլամ երբ գայ ձըմեռն.
Հետքերուդ լուռ հետեւելու:

Քեզ համար միշտ սիրտըս բաց է
Ինչպէս սիրուած հիւր մը ծանօթ.
Դուռըս արթուն քեզ կը սպասէ
Ըլլայ գիշեր թէ առաւօտ:

Այսօր ըլլանք եղբայր ու քոյր
Որ փարատին վախն ու կասկած,
Երբոր իջնէ սեւ վարագոյր
Զիրար գրկենք արշալուստուած:

Քեմիա 9 Յուլիս 1944

Փ Ա Ր Ո Ս Ը ⁽¹⁾

Դըժոխորկոր կ'որոտան թնդանթներն աւասիկ,
Եւ իրարու կը բախին մեքենաներ ու մարդիկ.
Աղէտ մը մեծ, ընդհանուր, ջրհեղեղէն աւելի,
Աշխարհն ամբողջ, հող ու ծով, կը վերածէ աւերի:
Հայրենիքդ իմ, հւր ես դուն, կու գայ գարունն ու կ'երթայ,
Բայց չի բերեր ոչ մէկ կոտորելի՝ լուր մը քեզմէ հեռակայ.
Բանաստեղծներ, չեմ լըսեր երգն անոյշ ձեր քընարին,
Սըւիններու տակ պողպատ՝ կու լայ ոգին հանձարին:
Համատարած մութին մէջ, ալեկոծման, անդադար
Դուն կը շողաս, ո՛ր փարոս, հայոց կղզի, Սուրբ Ղազար.
Ահա զիրար կ'որոտած եղբայրներ բիւր կը յառեն
Աչքերն իրենց, ո՛ր քեզի, աշխարհի չորս ծագերէն.
Վըհատութեան վերեւ մեր աստուածավառ ջահ Յոյսի.
Մեր արտամութեան մէջ անհուն ո՛ր բերկրութիւն ցանկալի:

1942

(1) Կու տանք հոս երկու հնչեակներ՝ ծանօթ Հրաչ Քաջարեանցէն, նախկին Սան Մ.-Ռ. վարժարանի, Ան, որպէս տեղաւաղ խալալիկան բանակին մէջ, բերած է իր օգտակար ծառայութիւնը՝ արժանանալով զնախաժանութիւն և համակրանքի: Այս երկու կտորները, զոր կը հրատարակենք, գրի առնուած են իր զինուորական կեանքին մէջ:

ԳԱՂԱՓԱՐԻ ՄԸ ՀԱՄԱՐ
ՋԻՆԱԿԻՑՆԵՐՈՒՄ

Երբ կը խորհիմ մեկուսի՝ թէ Իտալիոյ գեղեցիկ
Եմ որդեգիրն, էք մինչդեռ դուք որդիներն հարազատ,
Հոս է ձեր տունն հայրենի, և ձեր հոս են սիրելիք,
Հոս է ձեր սիրտն աղածրի, բիւր հոգերէն իր ազատ,
Խոր արտամութիւն մը թեւերն իր կը սփռէ իմ վերայ,
Թէպէտ ես հոս եմ, ձեր մէջ, կը գգամ որ սիրտս է հեռուն,
Ես կը ժպտիմ ձեզի հետ, բայց ծածուկ՝ սիրտըս կու լայ
Աւերակ տան մը առջեւ, շիրիմներու անանուն:
Սոսկ մէկ վայրկեան վաղանցիկ, բայց դար մ'իբրեւ խըտացած.
Եւ ձայներն այն մեղանոյշ, և դէմքերն այն սիրելի
Այ չեմ լըսեր, չեմ տեսներ. շուրջըս միայն բոցարժարծ.
Ձէնքեր, երգեր. Իտալիան է վրտանգի մատնըւած.
Իմ և ձեր մէջ ալ չըկայ խըտիր լեզուի և ազգի,
Գաղափարի մը համար՝ հոս եմ ահա սրտարաց:

ՀՐԱԶ ՔԱԶԱՐԵՆՑ

1943